ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ՝

ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾԵԼ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԿԱՐԻՆԵ ՀՐԱՆՏԻ ՔՈՉՈՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ---------- 3-5
2. Ծրագրի նկարագիր Խմբակի ձևաչափը ---------- 5-6
3. .Բուն պրոցեսի նկարագրություն ---------- 6-7
4. Խմբակի խնդիրները ---------- 7-8
5. խմբակի նպատակը---------- 8-9
6. Ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների համադրում ---------- 9
7. Ծրագրի ակնկալվող արդյունքները ---------- 10
8. Խմբակի իրականացման պլան ---------- 10-12
9. Արդյունավետության գնահատում ---------- 12
10. Չափորոշչային պահանջներին համապատասխանող կրթության ապահովում ---------- ------- 13
11. Օգտագործվող նյութեր ---------- 15-16

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Տեղեկատվական գրագիտություն ու մեդիագրագիտությունն օգնում են մարդուն ավելի գիտակից որոշումներ կայացնել որպես մեդիա սպառողներ,մեկնաբանել մեդիայի աշխատանքը,ինչպես նաև ստեղծել մեդիա բովանդակություն՝ի շահ իրենց իսկ իրավունքների պաշտպանություն>>:

ՅՈՒՆԵՍԿՕ

Մեդիագրագիտությունը,որպես շարժում առաջացել է 20-րդ դարի երկրորդ կեսին։Ի սկզբանե այն նպատակ ուներ հասկանալ լրատվամիջոցների աշխատանքը։Ժամանակի հետ, երբ լրատվամիջոցները դարձան ավելի բազմազան, դրանք տարբեր կերպ և ամենուր շրջապատում էին մարդկանց և դադարեցին սոսկ լրատվության շրջանառության միջոցներ լինելուց։ Դրանք ձևավորում էին հասարակական կարծիք և իրենց ակնառու ազդեցությունն էին թողնում հասարակության,առանձնապես պատանիների ու անչափահասներին վարքագծի,որոշումների,մտածելակերպի վրա։ Շատ կարևոր է փաստել,որ մեդիան միայն լրատվամիջոցները չեն։ Մեր լսած երգերը, ֆիլմերը, համակարգչային խաղերը, փողոցում հանդիպող տարբեր գովազդները, պաստառները, անգամ կոնֆետի թղթի վրայի գրությունը մեդիա է։ Մարդիկ մեդիա են և կարևոր է իմանալ սեփական պատասխանատվության առկայությունը, որպես մեդիաստեղծող։

Այսօր, առավել քան երբևէ,կարևոր է մեդիայից գրագետ օգտվող աշակերտական համայնք ունենալը։ Արդի աշխարհը շատ արագ է փոփոխվում,տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը,նորարարությունները մարդու կյանքը հեշտացնում են,դարձնում են ավելի հարմարավետ,բայց և բերում է մարտահրավերներ։<<Փոքրացած աշխարհում>> մենք շատ արագ,վայրկյանների ընթացքում տեղեկանում ենք աշխարհի այս կամ այն անկյունում տեղի ունեցող նորությունների մասին։Համացանցը հասանելի է բոլորին և ամենուր։Ամեն օր մենք ավելի ենք համոզվում,որ մեր հասարակության համար կարևորագույն

խնդիր է տեղեկատվական բազմազանության մեջ ճիշտ կողմնորոշվելը,տարբերակել ճիշտ ու սխալ ինֆորմացիան,պաշտպանված լինելը մանիպուլյատիվ հնարքներից:Հասարակության կայուն ու անվտանգ ընթացքը կապված է յուրաքանչյուրիս գրագետ վարքագծից: Հեշտ չէ նաև տարբերակել խոսքի ազատության և ապատեղեկատվության անտեսանելի սահմանը:Քանի որ ես մեր դպրոցում ստեղծել եմ մեդիագրագիտության խմբակ, որոշեցի կիսվել ձեզ հետ իմ փորձով,ուր հաջողությամբ համադրվել եմ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը;,

Հիրավի, կարևոր խնդիր է երեխաներին հեռու պահել նաև անցանկալի կայքերում հայտնվելուց:Մեդիագրագիտության ուսուցման առաջնահերթություններից է նաև երեխաներին տեղեկացնել սպասվող ոչ ցանկալի իրավիճակներում հայտնվելը,անձնական տվյալների անհարգի տարածելու անթույլատրելիությունը,կեղծ լուրերը կարդալ և տարածելու հետևանքները և այլն: Չկա մի սահմանում, որի վրա հիմվելով երեխան պաշտպանված կլինի նման անցանկալի տիրույթներում հայտնվելուց,կտարբերակի ճիշտ ու սխալ տեղեկությունները,:Այս ամենի համար պետք է տիրապետել մի քանի սկզբունքային մոտեցումների,որոնց կիրառումը հմարավոր կդարձնի առավելագույնս պաշտպանված լինել,իսկ հմտությունը պետք ձևավորվի փորձառության հիմքով;Հետևաբար,ըստ իս,մեզ բավականին ժամանակ է պետք հիմնավոր գիտելիքներ տալու համար,և ես նախընտրեցի խմբակի ձևաչափով աշխատելը:Իմ փորձի հիման վրա կարող եմ ասել,որ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համադրումը կարող է բավականին արդյունավետ լինել: Հիմա կշարադրեմ, թե ինչու ակումբի ձևաչափը ընտրեցի Ոչ ֆորմալ միջավայր է,որը հմարավորություն է տալիս ազատ,անկաշկանդ միջավայրի հինգ-վեց ժամ դասի նստելուց հետո ևս մեկ ժամ ավելացնելը արդեն իսկ, կարող է հոգնեցնել երեխաներին կարելի է ստեղծել պարարտ հող և միջավայր երեխայի ինքնադրսևորման համար:

Ամեն օր համոզվում ենք, որ մենք ուշացել ենք մեդիագրագիտության

տարածման հարցում։ Բայց նաև ուշ չէ սկսել կրթել երբեք։ Ինչքան էլ ոլորտի մասնագետները ակտիվ աշխատանք են տանում այս առումով,միևնույն է դպրոցներն ու կրթական այլ հաստատությունները մեծ դեր ունեն մեր հասարակությունում մեդիագրագիտության տարածման առումով։

2. Խմբակի ձևաչափը, նկարագիր

Մեդիագրագիտության խմբակ

2019 թվականի հոկտեմբերի 1-ից ցայսօր Շիրակի մարզի Ղարիբջանյան գյուղի միջնակարգ դպրոցում իրականացրել եմ մեդիագրագիտության խմբակ։ Խմբակի իրականացումը առաջին երեք ամիսների ընթացքում ֆինանսավորվել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում, ապա՝ օգտագործելով ձեռքի տակ եղած ռեսուրսները։

Դասընթացն անցկացվում է խմբակի տեսքով՝ հետևյալ սկզբունքները հաշվի առնելով։ Խմբակի ձևաչափը հնարավորություն է տալիս ստեղծել ոչ ֆորմալ միջավայր՝ պարզապես վերահսկելով դասի ընթացքը։ Ազատ և անկաշկանդ շփումները երեխաներին ինքնաարտահայտման լայն հնարավորություն են տալիս։ Հավասարը հավասարին սկզբունքը յուրաքանչյուրին թույլ է տալիս առաջադրել խնդիրներ և գտնել դրանց պատասխանները, լինել առաջնորդի դերում, այլ ոչ թե գտնվել առավելապես լսողի դերում։ Փոքր խմբերով անցկացվող քննարկումներն իրենց հերթին նպաստում են սեփական կարծիքի հիմնավորման, անհրաժեշտության դեպքում նաև այն վերանայելու, զարգացնելու կարողությունը։

Խմբակն անցկացվում է շաբաթը մեկ անգամ՝ դասերից առաջ կամ հետո տևելով միջինում մեկ ժամ։ Ի հավելումն բուն դասընթացին մասնակից աշակերտները ստանում են նաև հետաքրքիր և հետազոտական հմտություններին վարժեցնող առաջադրանքներ, որոնք իրականացնում են ինքնուրույն (անհատապես և խմբերով)։

Խմբակի հիմնական թիրախային խումբը 9-12-րդ դասարանի աշակերտներն են, քանի որ նրանց տարիքի բերումով մեդիագրագիտությունն ավելի անհրաժեշտ է և իրենք էլ ունակ են ամբողջությամբ ընկալել մատուցվող նյութը: Մասնակիցները խմբակում ներգրավվում
են ըստ հետաքրքվածության: Նախքան հերթական խմբակի աշխատանքների վերսկսումը դպրոցում սովորող թիրախային խմբի ներկայացուցիչ դասարաններում հայտարարվում է խմբակի մեկնարկի, ձևաչափի և ուսումնասիրվելիք նյութերի մասին: Այդուհետ, նրանք գրանցվում են խմբակին և մոտ 30 հոգանոց խմբի ստեղծումից հետո խմբակի աշխատանքները մեկնարկում են: Խմբակն իրականացնում եմ ինքս (և՛ դասավանդումը, և՛ կազմակերպումը), սակայն պետք է նշեմ, որ նախապես վերապատրաստվել եմ մի քանի տարբեր դասընթացների միջոցով՝ ներառյալ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից իրականացված Ուսուցիչների՝ մեդիագրագիտության ամառային դպրոցում, Շիրակի ուսուցիչների միություն ՀԿ-ի իրականացրած Երիտասարդ ակումբավարների դպրոցում և այլն:

Խմբակի կարևորագույն բաղադրիչը ինտերակտիվ մասն է, որի ընթացքում անցկացվում են քննարկումներ, խմբային աշխատանքներ, առաջադրանքներ և այլն, որոնք ուղեկցվում են հակիրճ դասախոսություններով: Խմբակն ունի ևս երեք կարևոր բաղադրիչ՝ 1. գործնական աշխատանքներ, որոնց ընթացքում աշակերտները հնարավորություն են ստացել աշխատել այնպիսի առաջադրանքների վրա, որոնք անմիջականորեն կապված են իրենց համայնքում և շրջակա միջավայրում առկա խնդիրների հետ (Օրինակ՝ վարել հարցազրույցներ, ստեղծել սոցիալական գովազդ, ստեղծել բնաձայն, հարցազրույցի մասնակից լինել և այլն);

2. հրավիրյալ դասախոսներ, ում շնորհիվ աշակերտները խորքային և առավել պատկերավոր գիտելիքներ են ստանում կոնկրետ թեմաների շուրջ՝ ոլորտի մասնագետների կողմից;

3. ճանաչողական այցեր, որոնց միջոցով խմբակի անդամներին հնարավորություն է ընձեռնվում ծանոթանալ մեդիա ոլորտում գործող

կազմակերպությունների աշխատանքներին՝ հենց կազմակերպությունների գրասենյակներում և մասնագետների հետ հանդիպման միջոցով (Օրինակ՝ Հանրային ռադիո, Ցայգ հեռուստաընկերություն, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն և այլն)։

Խմբակի խնդիրները

Նախքան ծրագրի նպատակին անդրադառնալը անհրաժեշտ է արձանագրել՝ ինչու է կարևոր մեդիագրագիտության դասավանդումը դպրոցում։

1. Շատ հաճախ, երբ աշակերտներին հանձնարարում եմ որևէ թեմայի վերաբերյալ տեղեկություն իմանալ և դասի ժամանակ ներկայացնել, նրանք համացանցից օգտվելով թյուր տեղեկություններ են հավաքագրում՝ դրանք որպես փաստ ընդունելով։ Ամեն անգամ ստիպված ենք լինում տեղում ուսումնասիրել մի քանի աղբյուր, գտնել ավելի հավաստի տվյալներ։ Իհարկե սա շատ լավ վարժություն է, սակայն աշակերտը հիմքային գիտելիքներ ձեռք չի բերում և ինքնուրույն չի կարողանում տարբերակել նյութի հավաստիությունը։

2. Այս տարիքում աշակերտները շատ ակտիվ են սոցիալական մեդիայում, սակայն հաճախ այդ ակտիվությունը սխալ ուղղորդվածություն է ունենում։ Շատ կարևոր է, որ երիտասարդները հասկանան սոց.ցանցերի լավ և վատ կողմերը և ավելի զգոն լինեն դրանցից օգտվելիս։

3. Այս տարիքում արժեհամակարգի ձևավորման մեջ անչափ կարևոր դեր են կատարում այն նյութերը, որոնք կլանվում են աշակերտի կողմից։ Հեռուստատեսությամբ և առցանց հարթակներում տեղադրվող նյութերը բնույթով շատ բազմազան են, օգտագործում են տարբեր բառապաշար և տարբեր նպատակներով են տարածվում։ Պետք է աշակերտին սովորեցնել, թե ինչն է պետք կլանել, իսկ ինչից հրաժարվել։

4. Վերջապես շատ կարևոր եմ համարում, որ աշակերտներն հետևեն իրենց տարածած նյութերին և իրենց կամքից անկախ չդառնան ապատեղեկատվություն տարածող։

Ամենաքիչը `տարրական գիտելիքներ հաղորդելը,մեր կարևոր խնդիրներից պետք է լինի։

3. **խմբակի նպատակը**

Խմբակի նպատակը մի քանի շերտերից է բաղկացած։

1. Գրագետ մեդիասպառողների կրթում. Հաշվի առնելով մեր ժամանակներին հատուկ ամենօրյա մեդիա աղմուկը/քաոսը անչափ կարևոր է երիտասարդ սերնդին օգնել կողմնորոշվել այս առցանց ինֆոաշխարհում։ Նրանց անհրաժեշտ է պատկերացնել, թե ինչ է մեդիան, ինչ տրամաբանությամբ է այն աշխատում, ինչպիսի ազդեցություն է թողնում աշխարհի և անհատի ձևավորման վրա։ Խմբակի նպատակն է պատասխանել այս հարցերին և միևնույն ժամանակ սովորեցնել աշակերտին ինչպես տարբերել հավաստի և կեղծ լուրերը, ենթադրություններն ու փաստարկները, ինչպես վերլուծել տեղեկությունները, ստուգել լուրերը և այլն։ Սրա հետ մեկ տեղ աշակերտն ինքն է ստանձնում իր փոքր համայնքում որոշակի նյութերի ստեղծման

պատասխանատվությունը՝ այսպիսով պատկերացում ստանալով, թե նյութի շրջանառման համակարգն ինչպես է աշխատում։

2. Քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացում. Մտածողության զարգացումը անհատի հաջողության գրավականն է (և՛ անձնապես, և՛ որպես հասարակության անդամ)։ Հետևաբար խմբակը նպատակ ունի մարզել մտածելու տարբեր ուղիներ գտնելու ունակությունը, հետևաբար նաև սեփական հիմնավորված որոշումների կայացման հմտությունը և վերջապես արտաքին ազդակների (կարծիքների, արժեքների, ինֆորմացիայի) հանդեպ քննադատաբար մոտենալու կարողությունը։

4. **Ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների համադրում**

Ֆորմալ կրթությունը իրենից ենթադրում է որոշակի կաղապարներ և կարգապահություն, իսկ ոչ ֆորմալ կրթությունն ընդհակառակը ընձեռնում է դասավանդման մեթոդների անսահման ընտրություն։ Այս երկու մոտեցումների համադրում է կարող է չափազանց արդյունավետ լինել, հատկապես այն

առումով, որ այն օգնում է և՛ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ամրապնդմանը, և՛ անհրաժեշտ նյութի ավելի դյուրին և մատչելի մատուցմանը:

5. **Ակնկալվող արդյունքները**

Խմբակն իրականացվել է այն ակնկալիքով, որ դասընթացի ավարտից հետո աշակերտները ավելի զգոն և գիտակցված մոտեցում կցուցաբերեն մեդիայից օգտվելիս: Նրանք կկարողանան ուշադրություն ցուցաբերել լուրեր կարդալիս, և քննադատաբար կմոտենան առցանց տիրույթում տարբեր հարթակներից օգտվելիս:

Սակայն մեդիագրագիտությունը մեր վերջնական նպատակը չէ, այլ միջոց է երեխաներին դարձնելու պատասխանատու մարդ և քաղաքացի՝ սեփական կարծիքն ունեցող, հաստատակամ, ով պատրաստ է ավելի գիտակից որոշումներ ընդունել: Դրա հետ մեկտեղ ակնկալվում է, որ խմբակին մասնակցելը աշակերտին կոգևորեն դպրոցում և համայնքում շատ ավելի ակտիվ վարք ցուցաբերել: Նրանց վերաբերմունքը դասապրոցեսին կփոխվի ու նրանց հետաքրքրասիրությունը կուղղվի սովորելուն և հետազոտելուն:

Ի վերջո խմբակի հաջողությունը ոգևորիչ է ուսուցչի, նրա կոլեգաների և համայնքի անդամների համար, ովքեր ևս անուղղակիորեն պրոցեսի մի մաս են դառնում: Ավելին՝ խմբակի հաջողությունը կօգնի կոտրել համայնքային դպրոցների մասին այն կարծրատիպը, որ աշակերտները այնտեղ պակաս հետաքրքրված են և սովորաբար ավելի ցածր առաջադիմություն ունեն:

Քանի որ խմբակն արդեն իսկ իրականացվում է, արդյունքները կարող եմ ասել,որ շոշափելի են ու ակնհայտ:

6. Խմբակի իրականացման պլան

Խմբակն արդեն իրականացվում է, սակայն նախքան բուն խմբակի աշխատանքների սկսելը զբաղվել եմ կազմակերպչական հարցերով: Առաջին հերթին բնականաբար խմբակի բացումը համաձայնեցրել եմ դպրոցի տնօրինության հետ: Ապա լուծել եմ տեխնիկական հարցերը՝ անցկացման վայրի,

տեխնիկական հագեցվածության, անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ և այլն։

Այնուհետև մշակել եմ դասավանդման պլանը, որը կցված է դիմումի փաթեթին։ Այս փուլում նաև նախնական պայմանավորվածություններ եմ ձեռք բերել հրավիրյա
դասախոսների և այն կազմակերպությունների հետ, որտեղ պետք է շրջայցեր իրականացնեինք։

Դասավանդման պլանի մեջ ներառվել են թեմաներ ինչպիսիք են օրինակ՝

- Մեդիատեսակներ, անցած փուլեր և տրանսֆորմացիա
- Լուրի ստեղծման դրդապատճառը
- Թիրախներ
- Այլընտրանքային մտածողության ձևավորումն առցանց տիրույթում
- Լրագրողական էթիկա
- Խոսքի ազատություն

Խմբակի ընթացքում օգտագործվում են մի շարք ոչ ֆորմալ կրթությանը հատուկ մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտները ավելի անկաշկանդ և ակտիվ վարք են ցուցաբերել։ Այդ մեթոդներից են օրինակ դերային խաղի մեթոդը, կլաստերի մեթոդը և հատկապես «Շրջված դասարան» մեթոդը։

Բաժնին վերաբերող առավել մանրամասն նյութերը ներկայացված են փաթեթում ներառված սահիկաշարում և դասավանդման ծրագրում։ Շարունակականությունն ապահովվում է առաջին հերթին նոր խմբակի մասնակիցների հավաքագրումով, սակայն ապագայում ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու համար 4 նոր հիմնական ռազմավարություն է կիրառվելու.

1. Փորձի փոխանակում այլ ուսուցիչների հետ. Այս քայլն արդեն իսկ իրականացնում եմ տարբեր հարթակներում «Ինչպես ստեղծել մեդիագրագիտության խմբակ» թեմայով այլ կրթական ոլորտի մասնակիցների հետ կիսվելով։ Օրինակ՝ 2020-ի ամռանը Պարադիգմա կրթական հիմնադրամի կազմակերպված ծրագրի շրջանակներում առցանց դասախոսություն եմ վարել

450 մասնակիցների համար, ում հետ կիսվեցի խմբակի արդյունավետության գաղտնիքներով: Վերջերս նաև Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համադրման մասին ֆորում եմ վարել Հայկական կրթական միջավայրում:

2. Խմբակի առաջին սերնդի անդամների հետ միասին որոշել էինք միջին դասարանների երեխաների համար պարզեցված ծրագիր մշակել, որով հենց իրենք՝ մասնակիցները տարրական գիտելիքներ կհաղորդեն երեխաներին դասղեկի ժամերի շրջանակներում,որն արդեն իրականացված է:

3. Նախատեսվում է համագործակցել այլ դպրոցների հետ, որտեղ աշակերտները կկարողանան միջոցառումներ անցկացնել մեդիագրագիտության վերաբերյալ և իրենց փորձով կիսվել տարեկիցների հետ:

4. Համայնքի հետ կապը ապահովելու համար աշակերտների հետ միասին ստեղծելու ենք տեղեկատվական թերթիկներ, որոնք երեխաները կտանեն տուն ընտանիքի անդամներին և ընկերներին փոխանցելու համար, որը կօգնի ընդլայնել խմբակի ազդեցությունը այլ թիրախային խմբերի ներգրավելով:

7. Արդյունավետության գնահատում

Պլանավորման փուլում նախատեսվում էր խմբակում ներգրավել 15 աշակերտի, սակայն աշակերտների շրջանում հետաքրքրվածությունն այնքան մեծ էր, որ խմբակն անցկացրինք մոտ 30 անդամով: Խմբակը նաև այնքան հաջողություն ունեցավ, որ մասնակիցները ցանկացան հաճախել նախատեսվածից ավելի երկար: Չնայած ֆինանսավորումը նախատեսված էր 3 ամսվա համար, ես և աշակերտները որոշեցինք խմբակը շարունակել օգտվելով սեփական ներուժից: Արդյունքում խմբակը գործում է մինչ օրս (այնքանով, ինչքանով թույլ է տալիս համավարակը):

10. Չափորոշչային պահանջներին համապատասխանող կրթության ապահովում

Չնայած խմբակը կարելի է համարել ավելի նվազ վերահսկելի և ոչ ֆորմալ մոտեցմանը հարող ձևաչափ՝ ուսուցչի վարպետության շնորհիվ հնարավոր է խմբակը կազմակերպել այնպես, որ տրվի չափորոշչային պահանջներին համապատասխանող կրթություն:

Մտքում ունենալով խմբակի վերոնշյալ նպատակը, խմբակը խնդիր ունի աշակերտին սովորեցնել՝

- ինքնուրույն վերլուծել տեքստը,
- ցանկացած նյութ վերլուծել տարբեր տեսանկյուններից,
- նյութը համեմատել այլ աղբյուրների հետ,
- փնտրել փաստեր միչև հավատալը,
- վերանայել սեփական կարծիքը դիմացինի հիմնավոր փաստարկի դեպքում,
- քննադատել մարդու արարքը, այլ ոչ թե մարդուն,
- ինքնուրույն վերլուծել մատուցված նյութը, մեդիատեքստերը,
- տարբերակել կեղծ և հավաստի տեղեկությունը,
- տարբերել կարծիքն ու փաստը։

Եզրակացություն

Այսպիսով՝ խմբակի աշխատանքները համարում եմ հաջողված, քանի որ արդյունքն արդարացրեց և նույնիսկ գերազանցեց սպասելիքները:

Մեդիագրագիտության տեսական գիտելիքներ ձեռք բերելուց զատ, ոչ ֆորմալ կրթությունը երեխաներին հնարավորություն տվեց ինքնադրսևորվել՝ անկախ այն բանից այլ առարկաներից առաջադիմում են, թե՝ ոչ:

Խմբային աշխատանքի տարբեր մեթոդների ու հնարների կիրառումը սովորեցրեց աշակերտներին մասնակցել խմբային քննարկումներին, ազատ և անկաշկանդ արտահայտել սեփական կարծիքը և գրագետ ձևակերպել փաստարկները:

Գնահատականի բացակայությունը օգնեց հիմնվել նրա վրա, թե ինչ գիտի երեխան՝ վստահություն հաղորդելով նրան («Ես դա գիտեմ, ես դա կարող եմ» սկզբունքով):

Երեխաները ակտիվորեն մասնակցում էին բոլոր աշխատանքներին, հանդես գալիս նախաձեռնություններով և իրականացնում դրանք առանց իմ հուշելու: Նրանք ստեղծեցին կոմերցիոն և սոցիալական գովազդ, հարցազրույցներ վարեցին համայնքում և դպրոցում ներառականության վերաբերյալ, պատրաստեցին բազմաթիվ պաստառներ և ավարտական բաց դասը կազմակերպեցին սեփական ուժերով, առանց իմ որևէ միջամտության: Բաց դասի ընթացքում նրանք գրագետ ձևով ներկայացրեցին իրենց սովորած նյութերից որոշները և մոտիվացրեցին դպրոցի այլ աշակերտներին ևս՝ ներգրավվել մեդիագրագիտության խմբակում:

Ինձ համար նույնպես այս նախաձեռնությունը կարևոր հնարավորություն էր գիտելիքների ու հմտությունների թարմացման առումով: Խմբակի ամեն դասին պատրաստվելիս ես բացահայտում եմ նոր նյութեր, փորձարկում եմ այլընտրանքային մեթոդների արդյունավետությունը:

Իմ կապը աշակերտներիս հետ ավելի ամրացավ և ես այդ կապն օգտագործում եմ երեխաների մեջ սովորելու և հետազոտելու հանդեպ սեր սերմանելու համար: Հետաքրքրական է, որ խմբակի մասնակիցները ավելի եռանդուն են դառնում, նրանց առաջադիմությունը այլ դասերում նույնպես աճում է, և վերջապես,

նրանք նախաձեռնող վարք են դրսևորում դպրոցում և համայնքում։
Արդյունքները արտացոլող լուսանկարները, ստեղծված այլ նյութերը կցված են, ինչպես նաև արտացոլված են սահիկաշարում։

Օգտագործված գրականություն

media.am | Մարդիկ են մեդիան | Մեդիագրագիտության ձեռնարկներ դասավանդողների համար • media.am https://media.am/hy/lab/2020/03/13/17887/

Դասավանդման հիմքում ընկած է Մեդիագրագիտության ձեռնարկը

Խմբակի հիմնական նպատակը գրագետ մեդիասպառողի ձևավորումն է, հետևաբար դասընթացների զգալի մասը նվիրված է քննադատական մտածողության զարգացմանը: Այդ նպատակով օգտագործվում են մի շարք ռեսուրսներ՝ Բուն TV-ի կողմից ստեղծված դասախոսություններ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից ստեղծված Քննադատական մտածողություն. Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ ձեռնարկը, մեդիագրագիտությանը վերաբերող գրքույկներ և այլն: